ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

30.04.2025Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երեւան

2025 թվականի ապրիլի 30-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Արամայիս Փաշինյանը, Արմեն Մարուխյանը, Մարիամ Գալստյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գասլտյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2024 թ. տարեկան մշտադիտարկման արդյունքների ամփոփման ներկայացում
2. Պաշտոնատար անձի վերաբերյալ վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ տեղեկանքների ներկայացում
3. Մեդիա հրապարակման հիման վրա շահերի բախման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների ներկայացում
4. Մշտադիտարկման շրջանակներում պաշտոնատար անձի վերաբերյալ ուսումնասիրության տեղեկանքի/պարզաբանման քննարկում
5. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության՝ Հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակի և շահերի հայտարարագրման պարտականության ընդլայնման հիմնավորումները և առաջարկները ՀՀ Արդարադատության նախարարություն ներկայացնելու հարցի քննարկում
6. Թվով 45 կուսակցությունների կողմից իրենց ղեկավար մարմնի անդամների տվյալները Հանձնաժողով չներկայացնելու և դրանից բխող համապատասխան

հայտարարագրերը Հանձնաժողով չներկայացնելու առնչությամբ վարչարարություն սկսելու հարցի ներկայացում:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետ Տիգրանուհի Խալաֆյանը: Մեդիա հրապարակման հիման վրա ներկայացվեց Արթիկի համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները: Դեպքի մանրամասների ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշեց գրություն ուղարկել Արթիկ համայնքի ավագանուն մեդիա հրապարակման օբյեկտ հանդիսացող ընկերության փոխտնօրենի պաշտոնի պաշտոնավարման ժամկետները հստակեցնելու վերաբերյալ, ինչպես նաև՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

Երրորդ հարցի շրջանակներում Տիգրանուհի Խալաֆյանը ներկայացրեց Անանիկ Ոսկանյանի վերաբերյալ մեկ այլ մեդիա հրապարակման հիման վրա կատարված ուսումնասիրություն: Հաշվի առնելով, որ տվյալ դեպքի վերաբերյալ առերևույթ խախտում արձանագրված չէ՝ Հանձնաժողովը որոշեց մեդիա հրապարակումների ուսումնասիրության ընդհանուր ցանկում ընդգրկել նաև այս դեպքը:

Երրորդ հարցի շրջանակներում Տիգրանուհի Խալաֆյանը ներկայացրեց նաև Մասիսի համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները, Հանձնաժողովի անդամները քննարկեցին դեպքի մանրամասները, որի արդյունքում որոշվեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում նախորդ նիստերում ներկայացված Տավրոս Սափեյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության շրջանակներում հարուցվել էր վարույթ, որի շրջանակներում Տավրոս Սափեյանի կողմից պարզաբանումը ներկայացրեց հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության փորձագետ Հեղինե Ենգոյանը, որի մանրամասները քննարկվեց Հանձնաժողովի անդամների կողմից և որոշվեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

Երկրորդ հարցի շրջանակներում Հեղինե Ենգոյանը ներկայացրեց Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները, որի վերաբերյալ Հանձնաժողովը քննարկեց մանրամասները և որոշեց հստակ դեպքերի վերաբերյալ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ

իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց Տիգրանուհի Խալաֆյանը: Ներկայացվեց 2024 թ. տարեկան մշտադիտարկման ամփոփման արդյունքները, վիճակագրական տվյալները, որի շրջանակներում նաև ներկայացվեց Հակոբ Շահգալդյանի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքը: Դեպքի մանրամասների ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

Օրակարգի վեցերորդ հարցը ներկայացրեց հայտարարագրերի վերլուծության վարչության կուսակցությունների ֆինանսական կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի պետ Նուշիկ Պետրոսյանը: Հարցի ներկայացմանը մասնակցեց նաև հայտարարագրերի վերլուծության վարչության Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Ռուզաննա Առաքելյանը, որի արդյունքում Հանձնաժողովը որոշեց գրավոր ծանուցում ուղարկել թվարկված կուսակցություններին՝ ղեկավար մարմնի անդամների տվյալները Հանձնաժողով ներկայացնելու վերաբերյալ:

Օրակարգի հինգերորդ հարցը ներկայացրեց Հայտարարագրերի վերլուծության վարչության պետի պարտականությունները կատարող Գառնիկ Ավետիսյանը: Հարցի մանրամասն ներկայացումից հետո Հանձնաժողովը որոշեց Հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակի և շահերի հայտարարագրման պարտականության ընդլայնման հիմնավորումները հստակեցնել և ներկայացնել Հանձնաժողովին: Փաստաթղթի ներկայացման համար ժամկետ սահմանվեց սույն թվականի մայիսի 30-ը:

Օրակարգում ներառված հարցերի քննարկման արդյունքներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ

1. Անանիկ Ոսկանյանի վերաբերյալ՝ գրություն ուղարկել Արթիկ համայնքի ավագանուն մեդիա հրապարակման օբյեկտ հանդիսացող ընկերության փոխտնօրենի պաշտոնի պաշտոնավարման ժամկետները հստակեցնելու վերաբերյալ տեղեկություն ստանալու վերաբերյալ:
2. Անանիկ Ոսկանյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:
3. Դավիթ Համբարձումյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ

իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

4. Տավրոս Սափեյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

5. Տարոն Չախոյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

6. Հակոբ Շահգալդյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

7. Գրավոր ծանուցում ուղարկել թվարկված թվով 45 կուսակցություններին՝ ղեկավար մարմնի անդամների տվյալները Հանձնաժողով ներկայացնելու վերաբերյալ:

8. Հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակի և շահերի հայտարարագրման պարտականության ընդլայնման հիմնավորումները հստակեցնել և ներկայացնել Հանձնաժողովին: Փաստաթղթի ներկայացման համար ժամկետ սահմանվեց սույն թվականի մայիսի 30-ը:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**